

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Գ Ի Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ ԽԱ. ՊՐԱԿ Ա.

1883

ՅՈՒՆՈՒԱՐ. ՓԵՏՐ. ՄԱՐՏ

Ա Ջ Դ

Կատարեց ԲԱՋՄԱՎԷՊԱ իր քառամնամեակ շրջանն, եւ կը յուսայ հուշակել իր կիւ սաղարեան յորելանն ալ: Երանօթ է ամենուն որ սկսաւ հրատարակուիլ այն, երբ գրեթէ զուրկ էր մեր ազգն 'ի նմանօրինակ պարբերական գրուածոց. իւր հիմնադրուածիւնն ալ հայերէն դպրութեան փոքր դարագլուխ մը կը ըննայ համարուիլ: Անցան ժամանակք, եւ ազգային ընդհանուր յառաջադիմութիւնն ընդարձակեց աւելի կամ պակաս յաջողութեամբ նաեւ այն մասն՝ որու կարապետ եւ օրինակ եղեր էր ԲԱՋՄԱՎԷՊՆ. աճեցան հետզհետէ օրագիրք, յորոց ոմանք յիրաւի կը հզնին լրագրութեան յատուկ ոգի եւ ուղղութիւն մը ցուցնել: . . . ԲԱՋՄԱՎԷՊՆ իր առանձին դրոշմը կը ջանայ քիչ շատ պահել: Եթէ երբեք Մխիթարեան Մլարանութիւնս օգտամատոց եղած է հայ գրականութեան, որ դարերէ 'ի վեր նիրհեալ եւ աղօտացեալ էր, յայտ՛ համարիմք, թէ փոքր 'ի շատէ մասն ունեցաւ այս մեզ՝ թերթն ալ իր պէսպէս նիւթովք շարադրեալ էջերովն: Իր առաջին նպատակն էր հոխաբար հանդիսացընել հայկական հին եւ նոր մտտեմագրութեան, պատմութեան, աշխարհագրութեան եւ այլ զանազան մասանց գիտելիքը. օտար քանասիրութիւնը ծանօթացընել եւ հանդերձ բարոյական եւ սնտեսական տեղեկութեամբք՝ ուսումնական գիտութեանց, գեղարուեստից, քաղաքագիտական դիպաց, կենսագրութեանց երեւելի արանց ընդարձակ ասպարէզ մ'ընծայել. որոնք միահաւուռ կը կազմեն քառասուն հատորս: Մենք ի յուսով եւ խրախուսանօք կը բազմապատկենք ջանքերնիս այս միջոցով օգնական ըլլալ անոնց որ նոյնպէս կը ջանան ազնուացընել 'ի ընէ ազնուական ժողովուրդ մը, որպիսի է Հայն. եւ մեր լրագրութեան հինաւուրց բազինն անկործան եւ յարգելի պահելու ժամանակ, կը խոստովանիմք՝ որ կը փափագինք միշտ գտնել այս մեր որպիսի եւ է աշխատասիրութեան յարգողք եւ ԲԱՋՄԱՎԷՊԻԱ ընթերցողք: